Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2024 թվականի N__02___

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար անվտանգության ապահովման ծառայությունների (պահնորդային ծառայություններ) ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ «ՕԹԵՎԱՆ-ԳՀԾՁԲ-24/1-4» գնման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

Տեխնիկական բնութագրով ի թիվս այլ պահանջների, սահմանվել է հետևյալը՝ «ունենալ շուրջօրյա ծառայության մատուցման վայրից Exspert snord ահազանգման, տեսահսկման և լոկացիոն համակարգ»:

Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «ՏԻՏԱՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Մասնակից):

Հայտերի բացման արդյունքում պարզվել է, որ «ՏԻՏԱՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես չի ներկայացվել Exspert snord ահազանգման, տեսահսկման և լոկացիոն համակարգ ունենալու վերաբերյալ ապացույցը:

Ընկերությանը տրամադրվել է շտկման հնարավորություն հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող փաստաթղթերի իսկության և առկայության վերաբերյալ՝ համաձայն «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշներին:

Ընկերությունը սահմանված ժամկետում չի վերացրել թերությունները:

Ընթացակարգի հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ «ՏԻՏԱՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, մերժվել է և արձանագրվել է, որ Ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝*

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

ՀՀ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 526-Ն Որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 41-րդ կետի համաձայն՝ *Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային*

ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ *Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,*

Հաշվի առնելով, որ «ՏԻՏԱՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ն մասնակցել է թիվ «ՕԹԵՎԱՆ-ԳՀԾՁԲ-24/1-4» գնման ընթացակարգին, սակայն ներկայացրել է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին չհապատասխանող հայտ, նկատի ունենալով, որ հանձնաժողովի կողմից մասնակցին շտկման հնարավորություն տրամադրվելուց հետո ևս հայտը չի համապատասխանացվել հրավերի պահաջներին և չի ներկայացվել *մասնագիտական գործունեության համապատասխանության վերաբերյալ հրավերով պահանջված ապացույցը, դրանք համադրելով վերոնշյալ օրենսդրական կարգավորումների հետ, կարող ենք պնդել,* որ առկա է «ՏԻՏԱՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու փաստական հիմքը:

Ողջ վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում եմ, որ անհրաժեշտ է «ՏԻՏԱՆ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01328826, հասցե՝ ՀՀ,ք.Երևան, Շիրազի փող. 24շ. բն. 29), ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՕԹԵՎԱՆ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ

Ալբերտ Սողոմոնյան